TELCELL

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

«13» մարտի 2024թ. N 40-Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «BON» ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԱՐՇԱՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ (17-ՐԴ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ««ԹԵԼ-ՍԵԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «BON» ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԱՐՇԱՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ» ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ (16-ՐԴ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ՝ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 05-Ի ԹԻՎ 58-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի թ) կետով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության «BON» գովազդային արշավի կանոնները նոր խմբագրությամբ (17-րդ խմբագրություն)՝ համաձայն սույն հրամանի հավելվածի (հավելվածը կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել ««ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերության «BON» գովազդային արշավի կանոնները» նոր խմբագրությամբ (16-րդ խմբագրություն) հաստատելու մասին գլխավոր տնօրենի՝ 2022 թվականի օգոստոսի 05-ի թիվ 58-Ն հրամանը:
3. Ավագ իրավաբան Էլեն Ասատրյանին՝ սույն հրամանի ստորագրման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերության բոլոր ստորաբաժանումների ղեկավարների աշխատանքային էլեկտրոնային փոստի հասցեներին իրազեկման նպատակով ուղարկել սույն հրամանը:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գլխավոր տնօրեն՝ **Ա. Ղազարյան**

Ստորագրություն՝ _____

Հաստատված է Wrike համակարգով

«13» մարտի 2024թ.
ք. Երևան

«BON» ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԱՐՇԱՎԻ ԿԱՆՈՆՆԵՐ

.BON
by Telcell

Հավելված
«BON» գովազդային արշավի
Կանոնները նոր խմբագրությամբ (17-րդ խմբագրությամբ)
հաստատելու մասին «Թել-Սել» ԲԲԸ գլխավոր տնօրենի
13 մարտի 2024թ. թիվ 40-Լ հրամանի

1. «BON» գովազդային արշավի իրականացման նկարագիր

1.1. «BON» գովազդային արշավը կազմակերպվում է «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության գովազդային քաղաքականության շրջանակներում՝ «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության բոլոր, այդ թվում նաև Telcell Wallet հավելվածով մատուցվող ծառայությունները գովազդելու նպատակով: «BON» գովազդային արշավի պայմանների կատարման պարագայում մասնակիցներին հնարավորություն է ընձեռվում կուտակել պայմանական միավորներ և ստանալ նվերներ:

1.2. «BON» գովազդային արշավի պայմանները սահմանող սույն փաստաթուղթը (այսուհետ՝ Կանոններ) հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի և 453-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ: Կանոններին համապատասխան՝ «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության ծրագրային ապահովման համակարգով վճարումների և (կամ) դրամական փոխանցումների իրականացումը համարվում է օֆերտայի լիարժեք և անվերապահ ընդունում (ակցեպտ): Օֆերտայի գործողության ժամկետը համընկնում է գովազդային արշավի իրականացման ժամկետի հետ:

2. Հիմնական հասկացություններ

2.1. **Ընկերություն՝** «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերություն,

2.2. **ծրագրային ապահովման համակարգ (այսուհետ՝ համակարգ)՝** SS համակարգ, որի միջոցով ապահովվում է Ընկերության իրավական ակտերով սահմանված գործառույթների կատարումը,

2.3. **Telcell Wallet հավելված (այսուհետ՝ TW հավելված)՝** էլեկտրոնային փողով վճարումների ընդունման, դրամական փոխանցումների և առցանց այլ գործարքների կատարման համար Ընկերության թողարկած բջջային հավելված, որի միջոցով օգտատերերը կարող են նաև տեսնել իրենց կուտակած BON-ների քանակը,

2.4. մասնաճյուղ՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող, Ընկերության գտնվելու վայրից դուրս առանձնացված ստորաբաժանում, որը գործում է Ընկերության սահմանած կարգով,

2.5. գործարք՝ ցանկացած անկանխիկ վճարում կամ փոխանցում, որն իրականացվում է Ընկերության մասնաճյուղերի կամ TW հավելվածի միջոցով,

2.6. BON՝ պայմանական միավոր, որն Ընկերությունը տրամադրում է հաճախորդներին՝ TW հավելվածի կամ Ընկերության մասնաճյուղերի միջոցով սույն Կանոններով սահմանված որոշակի գործողություններ կատարելու համար,

2.7. BON-ի գործողության ժամկետ՝ Ընկերության սահմանած ժամկետ, որի ընթացքում ուժի մեջ է (վավերական է) BON-ը,

2.8. BON-երի կուտակում՝ «BON» գովազդային արշավի շրջանակներում սույն Կանոններով սահմանված գործողությունների համար պայմանական միավորների ստացում,

2.9. BON-երի օգտագործում՝ Կանոններով նախատեսված կարգով տարբեր ապրանքների և (կամ) ծառայությունների ստացման դեպքում օգտատիրոջ BON-երի քանակի նվազեցում,

2.10. BON մարքեթ՝ TW հավելվածի բաժին, որում տեղադրված են Ընկերության կողմից տրամադրվող ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնք հնարավոր է ստանալ BON-երը համապատասխան չափով նվազեցնելու միջոցով,

2.11. օգտատեր կամ հաճախորդ՝ ցանկացած անձ, ով օգտվում է Ընկերության մատուցած ծառայություններից և ընդունել է սույն օֆերտան,

2.12. «Հյուր» կարգավիճակ՝ չակտիվացված TW օգտատիրոջ կարգավիճակ, որը տրվում է հավելվածը ներբեռնելուց հետո. օգտատիրոջը հասանելի չէ սույն Կանոններով նախատեսված կարգով ու դեպքերում BON-երի կուտակումը և օգտագործումը,

2.13. «Էքսպերտ» կարգավիճակ՝ անձնագրով նույնականացված օգտատիրոջ TW կարգավիճակ, որը տրվում է TW-ին առնվազն մեկ բանկային քարտ կամ բանկային հաշիվ կցելու դեպքում. տվյալ կարգավիճակով TW օգտատերը ստանում է «BON» գովազդային արշավի բազմաթիվ առավելություններ ու հնարավորություններ, ներառյալ՝ կուտակված BON-երը «BON մարքեթում» օգտագործելը և այլն,

2.14. «Գուրու» կարգավիճակ՝ անձնագրով նույնականացված օգտատիրոջ TW կարգավիճակ, որը տրվում է TW-ին առնվազն մեկական բանկային քարտ և բանկային հաշիվ կցելու դեպքում. տվյալ կարգավիճակով TW օգտատերը ստանում է «BON» գովազդային արշավի բոլոր առավելություններն ու հնարավորությունները, ներառյալ՝ կուտակված BON-երը

«BON մարքեթում» օգտագործելը, այդ թվում նաև BON-երի օգտագործմամբ ստանալով որոշակի ապրանքներ կամ ծառայություններ, որոնք նախատեսված են միայն «Գուրու» կարգավիճակով TW օգտատերերի համար, և այլն,

2.15. **Ծառայություն մատուցող՝** իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը, Ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն, համաձայնել է Ընկերության թողարկած էլեկտրոնային փողը որպես վճարամիջոց ընդունել իր կողմից մատուցվող ծառայությունների, վաճառվող ապրանքների կամ կատարվող աշխատանքների դիմաց:

3. BON-երի կուտակման կարգը

3.1. *TW հավելվածի միջոցով.*

3.1.1. Օգտատերը հնարավորություն ունի հետևյալ գործողությունների համար կուտակել հետևյալ քանակով BON-եր.

Ա)	Որևէ Ծառայություն մատուցողին էլեկտրոնային փողով վճարումների համար **Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ միակողմանի որոշմամբ ցանկացած պահի կասեցնել որևէ Ծառայություն մատուցողի օգտին վճարումներ կատարելիս սույն կետով նշված գործողության կատարման արդյունքում BON-երի կուտակումը*	100 ՀՀ դրամի դիմաց 5 BON հաշվարկով
Բ)	TW հավելվածը ներբեռնելու հրավեր երրորդ անձի ուղարկելու համար	Հրավեր ուղարկած անձը ստանում է 500 BON, եթե հրավեր ստացած անձը ներբեռնում է TW հավելվածը Հրավեր ստացած անձը ստանում է 500 BON, եթե վերջինս ստացած հրավերի հիման վրա ներբեռնում է TW հավելվածը Հրավեր ուղարկած անձը ստանում է 1000 BON, եթե հրավեր ստացած անձը TW հավելվածը ներբեռնելուց հետո կատարում է 1000 ՀՀ դրամ և ավելի գումարով առաջին վճարումը

3.1.2. Ընկերությունն իրավունք ունի միակողմանի իր հայեցողությամբ փոխել սույն Կանոնների 3.1 կետի 3.1.1 ենթակետով նախատեսված՝ ա) գործողությունների ցանկը, որոնց համար BON-եր են կուտակվում, բ) յուրաքանչյուր գործողության համար կուտակվող BON-երի քանակը, այդ թվում՝ որևէ Ծառայություն մատուցողին էլեկտրոնային փողով վճարումների դեպքում (այդ թվում նաև Scan and Pay տեխնոլոգիայի օգտագործմամբ) կուտակվող BON-երի քանակը՝ պայմանավորված Ծառայություն մատուցողի կամ այլ հանգամանքներից: Կատարված փոփոխությունների մասին Ընկերությունը տեղեկացնում է www.bon.am կայքի և (կամ) Facebook սոցիալական ցանցի BON Market էջի միջոցով:

3.1.3. Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի միակողմանի փոփոխել սույն Կանոնների 3.1 կետի 3.1.1 ենթակետում նկարագրված գործողությունները կատարելիս BON-երի կուտակման մեխանիզմը:

3.2. *BON-երի կուտակման ընդհանրական կանոններ*

3.2.1. Սույն Կանոններով նախատեսված գործողություն(ներ)ը կատարելիս օգտատերը մեկ օրվա ընթացքում կարող է կուտակել առավելագույնը 5000 (հինգ հազար) BON: Մեկ օրվա ընթացքում սույն Կանոններով նախատեսված գործողությունները կատարելիս 5000 BON կուտակելուց հետո նույն օրը BON այլևս չի կուտակվում: Սույն կետով նախատեսված սահմանափակումը չի տարածվում սույն Կանոնների 3.1.1 կետի Ը) ենթակետի վրա:

3.2.2. Ընկերությունն իրավասու է դադարեցնել Կանոններով նախատեսված ցանկացած որևէ կանոնի խախտմամբ (այդ թվում նաև Ընկերության տեխնիկական բնույթի խնդիրների հետևանքով) կուտակված BON-երի գործողության ժամկետը: Այդ թվում նաև Ընկերությունն իրավասու է դադարեցնել մեկ օրվա ընթացքում 5000 BON-ից ավելի կուտակված բոլոր BON-երի գործողության ժամկետը:

3.2.3. Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի դադարեցնել օգտատերերի կուտակած, բայց չօգտագործած բոլոր BON-երի գործողության ժամկետը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով իր www.bon.am կայքի և (կամ) Facebook սոցիալական ցանցի BON Market էջի միջոցով:

3.2.4. Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ իրականացնել «BON» գովազդային արշավի հետ կապված, սակայն սույն Կանոններում չնկարագրված ցանկացած լրացուցիչ ակցիա, որը հնարավորություն կնախատեսի կուտակել BON-եր, այդ մասին նախապես տեղեկացնելով և ակցիայի կանոնները ներկայացնելով իր www.bon.am կայքի և (կամ) Facebook սոցիալական ցանցի BON Market էջի միջոցով:

3.2.5. Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ միակողմանի որոշմամբ ցանկացած պահի կասեցնել կամ դադարեցնել սույն Կանոնների 3.1 կետում նկարագրված BON-երի կուտակման ցանկացած եղանակ:

3.2.6. Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի դադարեցնել օգտատերերի կուտակած, բայց չօգտագործած բոլոր BON-երի գործողության ժակետը՝ առանց նախապես տեղեկացնելու, պայմանով որ տվյալ օգտատիրոջ կողմից TW հավելվածի միջոցով 1 (մեկ) տարվա ընթացքում գործարքներ/վճարումներ չեն կատարվել:

4. BON-երի օգտագործման կարգը

4.1. TW հավելվածի օգտատերը հնարավորություն ունի կուտակված BON-երն օգտագործել հետևյալ տարբերակներով.

4.1.1. TW հավելվածում առկա՝ սույն Կանոնների 5-րդ բաժնում սահմանված BON մարքեթում, որտեղ տեղադրված են Ընկերության ապրանքները և ծառայությունները, որոնցից յուրաքանչյուրի համար նշված է՝

ա) BON-երի այն քանակը, որոնք նվազեցնելով հնարավոր է ստանալ համապատասխան ապրանքը կամ ծառայությունը,

բ) համապատասխան ապրանքի կամ ծառայության սահմանված քանակը,

գ) համապատասխան միավորների նվազեցմամբ ապրանքը կամ ծառայությունը հասանելի լինելու ժամկետը,

դ) BON-երի նվազեցմամբ ստացված ծառայության օգտագործման և (կամ) ապրանքի ստացման որոշակի ժամկետը, որից հետո հնարավոր չի լինի օգտագործել ծառայությունը և (կամ) ստանալ ապրանքը,

ե) Կանոնների գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև օրացուցային մեկ օրվա ընթացքում յուրաքանչյուր օգտատիրոջը համապատասխան ապրանքի կամ ծառայության հասանելի քանակը:

4.1.2. կուտակված BON-երը կամ դրանց որոշակի մասը փոխանցել ցանկացած այլ BON-երի հաշվեկշռին, ինչի արդյունքում վերջինս համալրվում է փոխանցված քանակի BON-երով:

4.2. Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ ցանկացած պահի ժամանակավորապես կասեցնել կամ դադարեցնել սույն Կանոններով նախատեսված՝ BON-երի օգտագործման ցանկացած տարբերակ՝ այդ մասին տեղեկացնելով իր www.bon.am կայքի և (կամ) Facebook սոցիալական ցանցի BON Market էջի միջոցով և (կամ) TW հավելվածում ծանուցմամբ:

5. BON մարքեթ

5.1. BON մարքեթից կարող են օգտվել միայն «Էքսպերտ» և «Գուրու» կարգավիճակներով օգտատերերը:

5.2. Ստացված ապրանքի և (կամ) ծառայության յուրաքանչյուր QR կոդ կարող է սկանավորվել և օգտագործվել միայն 1 (մեկ) անգամ:

5.3. BON մարքեթից սույն Կանոններով սահմանված կարգով ապրանք ստացած օգտատերը կարող է ապրանքը ստանալու իրավունքը փոխանցել այլ օգտատիրոջ: Ապրանքը ստանալու QR կոդը չի կարող վերադարձվել նվիրողին կամ վերանվիրվել այլ օգտատիրոջ:

5.4. BON մարքեթից» ստացված ապրանքը/ծառայությունը հնարավոր է ստանալ Ընկերության նախապես հայտարարած հասցե(ներ)ից:

5.5. Օգտատերը BON մարքեթի ցանկացած ապրանք/ծառայություն կարող է նշել որպես հավանած՝ դրանով Ընկերությանն իրավասություն տալով նմանատիպ ապրանքների մասին push ծանուցումներ ուղարկել օգտատիրոջը:

6. Այլ պայմաններ

6.1. Ընկերությունը իրավունք ունի միակողմանի իր հայեցողությամբ իրականացնել սույն Կանոնների ցանկացած պայմանի ցանկացած փոփոխություն, որի մասին տեղեկացնում է իր www.bon.am կայքում և (կամ) Facebook սոցիալական ցանցի BON Market էջում:

6.2. «BON» գովազդային արշավի մեկնարկի օրվանից TW հավելվածի միջոցով գործարքներ կատարող յուրաքանչյուր օգտատեր կուտակում է BON-եր՝ սույն Կանոնների պայմանների համաձայն:

6.3. Ընկերության աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամներն իրավունք ունեն BON-երի նվազեցմամբ ստանալ BON մարքեթում տրամադրվող ապրանքներ և (կամ) ծառայություններ, ստանալ «BON» գովազդային արշավի շրջանակներում և (կամ) սույն Կանոններում չնկարագրված որևէ այլ նվեր:

6.4. Նվերները, ապրանքները, ծառայությունները կարող են տարբերվել (չհամընկնել) Ընկերության հայտարարության (ծանուցման) մեջ նշված նվերներից, ապրանքներից, ծառայություններից, ինչպես նաև նվերը, ապրանքը, ծառայությունը ստացողների ակնկալիքներից (կարող են չհամընկնել գույնը, ձևը, տեսքը, որակը և այլն): Ընկերությունը պատասխանատվություն չի կրում հայտարարված և փաստացի տրամադրված նվերների, ապրանքների, ծառայությունների վերոնշյալ անհամապատասխանությունների համար: Օգտատերերը չեն կարող նվերների, ապրանքների, ծառայությունների փոխարեն պահանջել և ստանալ դրամական միջոցներ:

6.5. Օգտատիրոջ կողմից նվերների, ապրանքների, ծառայությունների փոխանակում կատարելու պարագայում տվյալ փոխանակված նվերների, ապրանքների, ծառայությունների բացակայության դեպքում Ընկերությունն Օգտատիրոջ համաձայնությամբ կարող է առկա նվերներից, ապրանքներից, ծառայություններից առաջարկել այլ նվերներ, ապրանքներ, ծառայություններ, այդ թվում՝ առաջարկել նույն ապրանքի այլ ապրանքանիշ կամ մոդել, իսկ Օգտատիրոջ անհամաձայնության դեպքում Ընկերությունը պարտավոր է կատարել Օգտատիրոջ փոխանակած BON-երի վերադարձ:

6.6. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում նվերի, ապրանքի, ծառայության մասին դրանք ստացողի հեռախոսահամարին զանգը և (կամ) կարճ հաղորդագրությունը չհասնելու արդյունքում նվերը, ապրանքը, ծառայությունը չստանալու համար:

6.7. Ընկերությունը նվերները, ապրանքները, ծառայությունները տրամադրում է ՀՀ օրենսդրությամբ դրանք ստանալու իրավասություն ունեցող անձանց՝ տրամադրելու վայր անձամբ ներկայանալու, անձը հաստատող վավեր փաստաթուղթը, հեռախոսահամարին այդ պահին ուղարկված հաստատող կոդը ներկայացնելու, համապատասխան փաստաթղթեր (այդ թվում՝ նվերները, ապրանքները, ծառայությունները ստանալու, նվերները, ապրանքները, ծառայությունները և դրանք ստացողներին տեսաձայնալուսանկարահանելու և արդյունքը հավաքագրելու, պահպանելու և տարածելու գովազդային (այդ թվում՝ օրինական այլ) նպատակներով համաձայնությունը) ստորագրելու, ստացողին տեսաձայնալուսանկարահանելու և նվերները, ապրանքները, ծառայությունները պահանջելու դեպքում, Ընկերության սահմանած ժամկետում: Չտրամադրված նվերները, ապրանքները, ծառայությունները մնում են Ընկերության հայեցողության ներքո:

6.8. «BON» գովազդային արշավին մասնակցող անձինք սույնով տալիս են իրենց համաձայնությունն առ այն, որ Ընկերությունն իրավունք ունի մարքեթինգային և օրինական այլ նպատակներով օգտագործել մասնակիցների կամ այլ անձանց տվյալները, որոնք մասնակիցը տրամադրել է (մուտքագրել է): Մասնակիցը հավաստում և երաշխավորում է, որ իր մուտքագրած տվյալները ինքը և երրորդ անձինք տրամադրել են իրենց կամքով, և երրորդ անձինք ծանոթացել են սույն Կանոնների պայմաններին: Ընկերությունն իրավունք ունի մասնակցող անձանց տեսաձայնալուսանկարահանել և արդյունքը հավաքագրել, պահպանել ու տարածել գովազդային և օրինական այլ նպատակներով:

6.9. Ընկերությունն իրավունք ունի մասնակցին և նրա մուտքագրված տեղեկատվությամբ ներկայացված այլ անձանց ուղարկել տեղեկատվական և գովազդային հաղորդագրություններ՝ թե՛ նշված էլեկտրոնային փոստի հասցեով, թե՛ նշված հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով: Սույնով մասնակիցը տալիս է նմանատիպ հաղորդագրություններ ստանալու համաձայնություն, ինչպես նաև երաշխավորում է, որ այն անձինք, որոնց մասին տեղեկատվությունն ինքը մուտքագրել է, նույնպես տվել են հաղորդագրությունները ստանալու համաձայնություն:

6.10. Ընկերությունն իրավունք ունի իրականացնել թե՛ մասնակցի, թե՛ նրա նշած այլ անձանց տվյալների ստուգում՝ Ընկերության չափանիշներով: Բացի այդ, Ընկերությունն իրավունք ունի մասնակցից պահանջել ներկայացնել անձը հաստատող, ինչպես նաև մասնակցին նույնականացնող անհրաժեշտ այլ փաստաթղթեր ու տվյալներ: Պահանջված փաստաթղթերը և (կամ) տվյալները չտրամադրելու, ինչպես նաև Ընկերության որոշած այլ դեպքերում Ընկերությունն իրավասու է դադարեցնել/արգելափակել մասնակցի մուտքը համապատասխան համակարգ, մասնակցին արգելել օգտագործել համապատասխան համակարգերը: Նույնականացնող փաստաթղթերի և տվյալների տեսակներն ու ներկայացման ձևերը սահմանում է Ընկերությունը:

6.11. Ընկերությունը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում այն տեղեկատվության համար, որը մասնակիցները մուտքագրում են, ինչպես նաև այն գործողությունների համար, որոնք իրականացվում են այդ տեղեկատվության հիման վրա: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում համապատասխան համակարգերի, ինչպես նաև օգտագործվող կայքի, սոցիալական ցանցերի աշխատունակության համար և չի երաշխավորում դրանց անխափան աշխատանքը:

6.12. Սույն Կանոնները (հրապարակային առաջարկը) գործում է անորոշ ժամկետով, և Ընկերությունն իրավասու է ցանկացած պահի դադարեցնել կամ կասեցնել դրա գործողությունը կամ փոփոխել դրա գործողության ժամկետը՝ այդ մասին առնվազն 5 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով Ընկերության www.bon.am կայքի և (կամ) Facebook սոցիալական ցանցի BON Market էջի միջոցով և (կամ) TW հավելվածում ծանուցմամբ:

7. Ընկերության վավերապայմանները

Անվանում՝	«ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերություն
Հասցե՝	ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
Հարկային հաշվառում՝	ՀՎՀՀ 02703102
Վեբ-կայք՝	www.telcell.am
Էլ.հասցե՝	info@telcell.am
Հեռախոս՝	+374 (60) 27-22-25